սով 65 սմ., (պէտի լինէր 69), անաղարտ մասը 52 սմ.:

Երրորդ երեսը յիշեցինք, որ չորս զուգահեռ գծերով հիւսուածք է, որի ճիշդ նմանը տեսանք եւ Բրդաձորի կոթողի վերայ եւ յատուկ է նաեւ սասանեան արուեստին (Պատկեր 81): Երկրաչափական այս քանդակները սիմվոլիկ նշանակութիւն ունին անշուշտ:



Պատկ. 89

Պատուանդաններ են եւ Պատկ. 83-84. առաջինը շուշանածաղիկ է, երկու տերեւներով, որ տեսանք նաեւ Կողբի մի խոյակի վերայ: (Պատկ. 58-59), ինչպէս եւ Ղարաջալարի (Պատկ. 60) եւ մանաւանդ Օձունի կոթողների վերայ եւ Պտղավանքի արեւմըտեան լուսամուտին: Նոյն պատուանդանի միւս կողմն է քառանկիւնի շրջանակի մէջ հաւա–